

ԱՐՇԱԿ ԹԱԳԱՒՈՐ

ԵՐԳԱՆԱՌՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ՀԻՆԳ ԱՐԱՐՈՎ

Գրեց

Հ. ՍԱՀԱԿ ՏԵՐ ՄՈՎՍԵՍԵԱՆ

(Շար. տե՛ս Բազմ. 1959, թ. 1-2, էջ 35)

ՀԻՆԳԵՐՈՐԴՈՐԴ ԱՐԱՐ

ՏԵՍԻԼ Ա.

Գործողությունը կը կատարուի հուստա-տանի մէջ: Բեմին խորքը կը ներկայացնէ դաշտավայր մը, որուն աջ կողմէն կը բարձրանան խրճատեսիլ ժայռեր. ձախ կողմը կը գտնուի Անյուշ հոշակաւոր բերդը, որուն սիւնագարդ մէկ սրահը վերապահուած է բերդակալ իշխանին. բեմը կը ներկայացնէ այս սրահը: Սրահին բովանդի մուտքերը կ'առաջնորդեն ցկեանս բանտարկուածներուն մէջին խորշերը: Այդ խորշերէն մէկուն մէջ, բեմին ձախակողմը, նետուած է Արշակ քագաւորը, հագուած մահապարտի սպիտակ շապիկը, ոտքերը գարնուած են շղթայի, կը կրէ երկար անխնամ մօրուֆ մը: Խորշին մէջ, Արշակի դիմաց կանգնած է Վասակ Մամիկոնեանի մորթը՝ խոտով լեցուն, պատուանդանի մը վրայ դրուած, որ կէս մը կը նշմարուի բեմէն: Մորթուֆ օդ մըն է, փայլակ եւ շանթեր կը տեսնուին: Վարագոյրը բացուելուն՝ բեմին վրայ են Արտաւան պահլալ իշխանը որ բերդակալն է. հագած է պարսիկ իշխանի տարագ. բովն է Վոնոն, ցեղով պահլալ, որ բանտապահն է. անոր գօտիէն կախուած են բերդին խոշոր բանալիները:

ԱՐՏԱԻԱՆ. — (Սուրին կոթնած) Այսպէս տխուր կը վերջանայ մարդկային փառքը. ո՛րքան երջանիկ էր Արշակ արքան՝ երբ կը բազմէր իր ոսկեղէն դահուլ վրայ, շրջապատուած իր չորս հարիւր նախարարներէն, բոլորն ալ ոսկեղօծ դահա-

ւորակներու վրայ նստած: Այժմ նա իջած է թշուառութեան խորը: (Բեմի ետեւէն կը լսուին ոտքի ֆայլեր):

ՎՈՆՈՆ. — Իշխան, դո՛ւք, լրտեսներով շրջապատուած ենք:

ԱՐՏԱԻԱՆ. — Արիւնով ալ կցորդ ենք: Թշուառ թագաւորը մեր մօտաւոր ազգականն է, եւ մենք անկարող ենք անոր վրէտը թեթեւցնել:

ՎՈՆՈՆ. — Տէր իմ, դուք հպատակելով այս արեան ձայնին, քան անողոր Արքայից արքային սպառնալիքներուն, արտօնած էք որ Հայոց թագաւորը մերթ ընդ մերթ մտնէ այս օդատուն դահլիճը, եւ արձակ համարձակ արտի դառնութիւնը դուրս թափէ: Միթէ թշուառ թագաւորին համար ասիկա վշտի թեթեւացում մը չէ՞:

ԱՐՏԱԻԱՆ. — Իրաւունք ունիս, Վոնոն, Արշակի մեծագոյն սիրտինքն է դիմացն ունենալ սիրտ ունեցող պարթեւ կամ պահլալ իշխան մը, որ դաւաճանութեան աւրաւը չկրէ իր վրայ: Ալանադան մը աւելի պիտի չի իրեն, քան Սասանեան բռնակալ մը: (Ներսէն կը լսուի Արշակի ձայնը):

ԱՐՇԱԿ. — (Ներսէն խորհրդաւոր) Վասակ, քաջերու մէջ քաջագոյնը. մեր նըժոյղները պատրաստ են. օ՛ն, դէպի պատերազմի դաշտը. յաղթութիւնը մեզի կը սպասէ...:

ՎՈՆՈՆ. — Շատ անդամ այսպէս կը զանազանցէ՝ երբ կ'երթամ իրեն հաց եւ ջուր տանելու: (Կը լսուի Արշակի ոտքի շղթաներու ձայնը. կ'արտասանէ անկապ խօսքեր եւ կը մօտեմայ դաշտին դրան: Արտաւան եւ Վոնոն բեմի աջակողմեան դռնէն դուրս կ'ելլեն. կը մտնէ Արշակ):

ՏԵՍԻԼ Բ.

ԱՐՇԱԿ. — (Անորոշ ակնարկ մը նետելով չորս կողմը) Արշակ, կեանքդ այսպիսի վերջալո՞յս մը պիտի ունենար: Ուխտադրու՞ծ Շապուհ, նո՛ւմք քու վրայ. առէ՛ժք: (Շղթաները ֆաշելով կ'երթայ այն ուղղութեամբ, ուր կը գտնուի Վասակի յարդալից մորթը, եւ յափշտակուած)

Վասակ, վաղէ՛ դէպի յաղթանակ: Երեւցիր պարսիկին: Խօսէ՛, ու՛ յաղթող Սասանեան բանակներուն...: Կենդանարար արեգակ, կենդանարար Արարատ: (Ներսէն կը մտնէ Արտաւան, որ դրան ծակէն լսած է Շապուհի գլխուն քափած անէծքները):

ՏԵՍԻԼ Գ.

ԱՐՏԱԻԱՆ. — Արքայդ Հայոց, ի դուր կը նետես բարկութեան շանթերը Շապուհի արհամարհանքին դէմ: Պատերը ականջ ունին:

ԱՐՇԱԿ. — Ամէն կողմէ վրաս կը յարձակին:

ԱՐՏԱԻԱՆ. — Բայց ես, հէ՛զ թագաւոր, քու վշտերուդ վարկից եմ: Երբեք տեսնուած չէ որ Անյուշ բերդի մէջ նետուած քաղաքական յանցաւոր մը ոտք կոխած ըլլայ այս դահլիճէն ներս:

ԱՐՇԱԿ. — Բայց ես ոճրագործ մարդ մը չեմ: Ես եւ իմ աննման սպարապետը մարմնացումն էինք ազնուական զաւակաւորի մը: Միթէ յանցա՞նք է գէն ի ձեռին կոտիլ իր հայրենիքին եւ անոր անկախութեան համար:

ԱՐՏԱԻԱՆ. — Պարսկաստանի մէջ բոլոր խելացի մարդիկ հիացում ունին քու պաշտպանած բարձր զաւակաւորի վրայ:

ԱՐՇԱԿ. — Եթէ անոնք լռէին, Հայաստանի ժայռերը պիտի աղաղակէին:

ԱՐՏԱԻԱՆ. — Հիացումի զգացումը հետզհետէ կը թափանցէ պարսիկ ժողովուրդին խաւերուն մէջ:

ԱՐՇԱԿ. — Իսկ քու տէ՛րը...:

ԱՐՏԱԻԱՆ. — Յաւիտեական ամօթով ծածկուած է:

ԱՐՇԱԿ. — Այնպէս ինչ թագաւոր, որ վահանաւորութեան վրայ քիչ մը զաւակաւոր ունենար, մեր դործը պիտի դուրս եւ պիտի պատուէր: Արքայից արքաներու հողինքը սովոր չեն այս տատիճանի վահանաւոր: (Աջակողմեան դրան ետեւէն կը լըսուին շշուկներ եւ ոտնաձայն):

ԱՐՏԱԻԱՆ. — (Տագնապած) Արդեօք յանդուգն լրտես մըն է:

ԱՐՇԱԿ. — (Ինքնիրմէ դուրս ելած) Ար-

տաւան, իմ եւ Շապուհի մէջ մահուան չափ պատերազմ կայ: (Դանդաղաբայ կը յառաջանայ դէպի իր խորշը) Քաջութի մութ խոռոչիս մէջ, ուր Վասակ մինակ մնացած է: Ուժաթափ եմ. կը զգամ որ ոտքերուս տակ կը պակսի հայկական հողը եւ ջուրը: (Արշակ հազիւ դուրս ելած, աջակողմեան դռնէն ներս կը մտնէ Վոնոն, լեղապատառ):

ՏԵՍԻԼ Գ.

ՎՈՆՈՆ. — Իշխան, ամբողջ մարմնովս կը դողամ, լեզուս քիմքիս կպած է:

ԱՐՏԱԻԱՆ. — (Այլայլած) Շուտ խօսէ, ի՞նչ եղաւ:

ՎՈՆՈՆ. — Բարձրացեր էի բերդի աշտարակին վրայ՝ քիչ մը մաքուր օդ ծծելու համար: Եւ ահա ի՞նչ տեսնեմ. մարդ մը, երկնաւոր թէ երկրաւոր, չեմ գիտեր, հեծած օդաչու նոսրի մը վրայ, փաթթուած լայն վերարկուի մը մէջ, պատուելով թանձր մշուշը, մրրիկի արագութեամբ կը սուրայ դէպի բերդ:

ԱՐՏԱԻԱՆ. — (Գոյնը նետած) Ուրիշ բան չտեսա՞ր, Վոնոն:

ՎՈՆՈՆ. — Տէր իմ, տեսայ որ օդաչու ձիաւորին ետեւէն եւ քովերէն խուճ մը մարդիկ, նոյնպէս վերարկուներու մէջ ծածկուած, սրնթաց ձիերով դէպի բերդը կը վազեն:

ԱՐՏԱԻԱՆ. — (Սրտադող) Որո՞նք են այդ խիզախ մարդիկը, որ մահը աչք առած, կը համարձակին մօտենալ այս ահաւոր դէպքին, որուն շուրջը երկնքի թռչուններն անդամ չեն համարձակիր ճախրել: (Բեմի ետեւէն իրարանցում մը կը լսուի, կը լսուին նաեւ ձայներ):

ՋԱՅՆ ՄԸ. — Ո՛ղջ լեր, Արշակ, քու մթաղանած աստղդ մեր սրտերը կը պատուէ:

Բ. ՋԱՅՆ. — Ո՛ղջ լեր, Արշակ, ո՛ղջ լեր:

Գ. ՋԱՅՆ. — Խորտակենք դուռը: (Դուրսէն ստիպով դուռը կը զարնեն աղմուկներով):

ՎՈՆՈՆ. — Իշխան, մեր կեանքը վտանգի մէջ է. մեկնենք: (Շտապով դուրս կը խո-

յանան աջակողմեան դռնէն. մինչ Արտա-
ւան կը պոռայ). —

ԱՐՏԱԽԱՆ. — (Դէպի դուրս վագելով)
Պահակներ, զէնքի...

ԴՐԱՍՏԱՄԱՍ. — (Դուրսէն) Ձեռքիս մէջ
բռնած եմ արքունի հրովարտակը. ով որ
համարձակի ինծի մօտենալ՝ զէնքը ձեռքին
մէջ պիտի տապալեմ:

ԱՐՏԱԽԱՆ. — (Դուրսէն) Արքունի հրո-
վարտակը...: Պահակներ, զէնքերնիդ
վար: (Ներս կը մտնեն աջակողմեան դռնէն
Դրաստամատ եւ Արտաւան):

ՏԵՍԻԼ Ե.

ԴՐԱՍՏԱՄԱՍ. — (Հագած է հայ նախա-
րարի տարագ, սուրը մէջքին) Ահա մեծ
արքային ձեռագիր հրովարտակը, վնքը-
ւած իր վարդապետի մատանիով: (Հրո-
վարտակը կը յանձնէ Արտաւան իշխանին):

ԱՐՏԱԽԱՆ. — (Խոնարհելով կ'առնէ հրո-
վարտակը, կը համբուրէ, կը դնէ աչքե-
րուն եւ դողդոջուն ձեռքերով բանալով կը
կարդայ գլխիկը):

— Մաղդեղանց քաջ եւ բարձակից արե-
գական Շապուհ Արքայից Արքայ, որդի
Միհրի, իր հաւատարիմ ծառայ իշխան
Արտաւանի, Ողջոյն:

Մեր անդառնալի հրամանն է որ քաջարի
Դրաստամատ, Հայոց Արշակ Թադաւորին
պերճապայծառ իշխանը, որուն վը պար-
տիմ իմ կեանքս, լիազօր իշխանութիւն ու-
նենայ կապանքներէն արձակելու իր բնիկ
թադաւորը, եւ ամբողջ օր մը թադաւո-
րական կեանքով դայն սիրովելու: —

ԱՐՏԱԽԱՆ. — (Յուզումէն շուարած)
Անմահ Արքային հրամանը աչքիս վրայ:
Ամբողջ օրը դուռն ես Անյուշ բերդին տէրն
ու իշխանը: Հրամայէ, եւ ես քու հնա-
զանդ ծառայ եմ:

ԴՐԱՍՏԱՄԱՍ. — Ահա թէ ինչ է հրա-
մանս. ես ինքս պիտի մտնեմ իմ սիրելի
արքայիս մթին նկուղը, պիտի արձակեմ
իր շղթաները, պիտի տանեմ բաղնիք, իմ
ձեռքովս պիտի լուամ անոր գլուխը եւ օ-
ծեմ Հայաստանի անուշահոտ իւղերով: Եւ

ապա անոր պիտի հազուեցնեմ իր արքու-
նական պատմութեանը:

ԱՐՏԱԽԱՆ. — (Մեկուսի) Այսպիսի դո-
ւովապին սէր մեր մէջ ձերքը տեսնուած է:
(Յետոյ բարձրաձայն) Վահագն իշխան, ու-
րիշ պատուէր ունի:

ԴՐԱՍՏԱՄԱՍ. — Այս դահլիճին մէջ
պատրաստել տուր սեղան մը, ծածկուած
աղինը սփռոցով. անիկա պիտի զարդար-
ուի ամենաընտիր խորտիկներով, պատ-
րաստուած հայ իշխանուհիէ մը, զոր ես
հետս բերած եմ: Սեղանին վրայ պիտի
դնուի միայն Գողթան զինին, զոր նոյն-
պէս հետս բերած եմ: Ճաշկերոյթի ժա-
մանակ, հետս եկող Գողթան գուսանները
նուազարաններով պիտի երգեն մեր զը-
ուարթ երգերը, իմ բնիկ արքան ուրախա-
ցընելու համար:

ԱՐՏԱԽԱՆ. — (Յուզումով) Դրաստա-
մատ, ոսկեղէն սիրտ ունիս դուռն:

ԴՐԱՍՏԱՄԱՍ. — (Անձկանօք) Նկուղին
դուռը բաց է:

ԱՐՏԱԽԱՆ. — Փականքով կ'զարկած է:
Այս է Արքայից Արքային հրամանը: (Մօ-
տենալով դրան) Վոնոն, սիրտ հոս:
(Վոնոն շտապով ներս կը մտնէ աջակող-
մեան դռնէն):

ՏԵՍԻԼ Զ.

ԴՐԱՍՏԱՄԱՍ. — Բանտապահ, այժմ
ինչ միճակի մէջ է իմ պաշտելի թադա-
ւորը:

ՎՈՆՈՆ. — (Քար կտրած) Կէս քունի,
կէս գոռանցանքի մէջ:

ԴՐԱՍՏԱՄԱՍ. — Ի՞նչպէս մօտենամ
թշուառին: Յաւէն սիրտս պիտի պայթի:

ԱՐՏԱԽԱՆ. — Վոնոն, դնա նկուղին դու-
ռը բաց. եւ ապա հոս եկուր:

ՎՈՆՈՆ. — (Գլուխը խոնարհեցնելով)
Կը հնազանդեմ, Տէր իշխան: (Դուրս
կ'ելլէ):

ԴՐԱՍՏԱՄԱՍ. — Բերդակալ իշխան,
կ'ուզեմ որ դու անձամբ հսկես կարգա-
դրութիւններուն ճշտիւ գործադրութեան
վրայ:

ԱՐՏԱԽԱՆ. — Կրնաք ապահով ըլլալ:
Իմ անձնական լողարանը արդէն կազմ ու
պատրաստ է:

ԴՐԱՍՏԱՄԱՍ. — Վայրկեաններն անդամ
համբուած են: Փութամ ուրախ լուրը տա-
նելու: (Ծանրաբայլ եւ երկչոտ կը յառա-
ջանայ դէպի Արշակի նկուղը, որ կը գըտ-
նուի ձախակողմեան դրան խորշին մէջ:
Պահ մը կանգ կ'առնէ, ըսելով. — Սիրտս
կը արտիէ: — Ապա ոտք կը դնէ նկուղի
սեմէն ներս, բայց այնպիսի կերպով որ
հանդիսականները որոշապէս լսեն Արշակի
եւ Դրաստամատի խօսակցութիւնը):

ԱՐՇԱԿ. — (Յնորժէն սքափած) Ո՞վ ես
դու, անծանօթ օտարական, որ յանդգներ
ես դադողադողի այստեղ սարդիլ: Եկեր ես
իմ ցաւէ՞րս վերանորոգելու: Ո՞վ ես դու.
խօսէ՞: Սուրս կը փնտռեմ... Եւ վրաս չըղ-
թաներ միայն կը դնեմ:

ԴՐԱՍՏԱՄԱՍ. — Տէր արքայ, հին բա-
րեկամ մըն եմ. քու վշտերուդ միտթարիչ
մը:

ԱՐՇԱԿ. — Ես հոս բարեկամ չունիմ: Իմ
միակ բարեկամս Վասակն է մորթաղերդ:

ԴՐԱՍՏԱՄԱՍ. — (Հագիւ շունչը բըռ-
նած) Տէր արքայ, զիս չե՞ս ճանչնար: Ես
իշխանն եմ Անդեղ տան, եւ պահապան
արքունի բերդերուն դանձերուդ:

ԱՐՇԱԿ. — (Խանդավառուած) Ա՛հ, այդ
քու ձայնդ է. դու Դրաստամատ, դու իմ
հաւատարիմ եւ սիրելի ներքինին:

ԴՐԱՍՏԱՄԱՍ. — Այո՛, Տէր արքայ,
Դրաստամատն եմ, մարմնով եւ ոսկրով:

ԱՐՇԱԿ. — Այս թանձր մթութեան մէջ
աչքերս խաւարած են: (Արտաւան քայլ առ
քայլ կը մօտենայ խորշին այդ տեսարանը
տեսնելու համար, մինչ Դրաստամատ ա-
ւելի ներս կը մտնէ):

ԴՐԱՍՏԱՄԱՍ. — (Խանդավառուած)
Տէր արքայ, Վահագնի պէս՝ արեգակի
պէս աչկունք պիտի ունենաս: (Կը բռնէ
Արշակի ձեռքէն եւ կ'առաջնորդէ դէպի
դահլիճ, մինչ Արտաւան մէկ կողմ կը քաշ-
ուի: Այդ պահուն ներս կը մտնէ Վոնոն
եւ քարացած կը կենայ աջակողմեան դրան
առջեւ):

ԱՐՇԱԿ. — (Յուզումով նայելով Դրաս-
տամատին) Քու սիրալի դէմքդ է: Այո՛,
դու անկեղծ հաւատարմութեան մարմնա-
ցումն ես:

ԴՐԱՍՏԱՄԱՍ. — (Կը խոնարհի, կը
համբուրէ Արշակի ոտքերը եւ ապա կը լու-
ծէ անոր ոտքերուն եւ ձեռքերուն շոքա-
ները, ըսելով) Այդ համբոյրը պիտի եր-
ջանկացնէ հոգիս:

ԱՐՇԱԿ. — Եկուր բազուկներուս մէջ, որ
համբուրեմ պայծառ ճակատդ, որուն վը-
րայ մատնութեան մոխըր երբեք չքսուե-
ցաւ: (Կը գրկախառնուին):

ԴՐԱՍՏԱՄԱՍ. — Անլուծանելի կապերով
կապուած եմ քեզի, Տէր արքայ: Գուցէ
ահարկու ցնորք մըն է որ իմ մէջս կը
զոյգէ:

ԱՐՇԱԿ. — Դրաստամատ, ի՞նչպէս մը-
տար այս սարսափազդեցիկ բերդին մէջ եւ
կենդանի մնացիր:

ԴՐԱՍՏԱՄԱՍ. — Տէր արքայ, վայրկեան
միակ չեմ կրնար քեզ տեսնել այս վիճա-
կին մէջ: Սիրտս կ'արիւնոտի: Ընթրիքի
պահուն դադունիքը կը բանամ: Հիմա
բաղնիքը պատրաստ է, երթանք, Տէր ար-
քայ: (Կը մտնէ Արշակի քեւը եւ հանդար-
տաբայլ աջակողմեան դռնէն դուրս կ'ել-
լեն):

ԱՐՏԱԽԱՆ. — Վոնոն, դու հոս մնացիր,
ես կ'երթամ աչք մը տալու որպէսզի ամէն
ինչ անթերի կատարուի: (Կը մեկնի աջա-
կողմեան դռնէն):

ՏԵՍԻԼ Է.

ՎՈՆՈՆ. — Աչքերուս չեմ հաւատար:
Այսչափ տարի է որ բանտապահ եմ, եր-
բեք տեսած չեմ որ կալանաւոր մը դուրս
ելած ըլլայ այս ահաւոր բերդի նկուղէն:
Ի՞նչ պատահեք է որ Դրաստամատ՝ Ար-
քայից արքայի աչքի լոյսը դարձեք է: Ըն-
կերացող գեղանի հայ իշխանուհին կը
պատմէր թէ Դրաստամատ աստուածա-
կերպ Շապուհին վեանքը փրկեք է: Ո՛հ,
ինչպիսի՛ վեհաճանութիւն: (Աջակողմեան
դռնէն ներս կը մտնէ Արտաւան, որ յայտ-
նապէս խոռված է):

ՏԵՍԻՆ Ը.

ԱՐՏԱԽԱՆ. — Վոնոն, չուտով դործի անցիր: Ընթրիքի սեղանը այս տեղ կը պատրաստես (կը ցուցնէ տեղը): Կը դործածես իմ սեղանին ազնիւ սիւնոցը եւ իմ անձնական արծաթէ սպասները: Գողթան գինին ներսը պատրաստ վեցած է:

ՎՈՆՈՆ. — Գողթան երգիչները ո՞ւր պիտի տեղաւորեմ:

ԱՐՏԱԽԱՆ. — Դահլիճէն դուրս, կողմ-նակի սրահին մէջ:

ՎՈՆՈՆ. — Ընթրիքին ո՞վ պիտի սպասուորէ:

ԱՐՏԱԽԱՆ. — Ես ինքս. Հայոց արքան, որ իր թշուառութեան մէջ անգամ մեծ է, արժանի է պարսիկ իշխան մը սպասուոր ունենալու:

ՎՈՆՈՆ. — Տէր իմ, կրնամ համարձակիլ բան մը հարցնելու:

ԱՐՏԱԽԱՆ. — Պատրաստ եմ հետաքրքրութեանդ գոհացում տալու:

ՎՈՆՈՆ. — Տէր իմ, խոռոված դէմքդ մտքիս մէջ չարագուշակ կասկածներ կ'արթնցնէ:

ԱՐՏԱԽԱՆ. — Դէմքս՝ խոռոված սրտիս արտայայտութիւնն է: Աստուածակերպ Արքայից արքան չարաչար պարտուել է քուչանաց բանակներէն: Զինքը մահուանէ ազատել է Դրաստամատ ներքինին:

ՎՈՆՈՆ. — Հիմա կը հասկնամ Դրաստամատի ազդեցութեան դադարիքը:

ԱՐՏԱԽԱՆ. — Կասկած չկայ որ քուչանները, որոնք կը կողակարծին Արչակունի թագաւորներէ, յարձակել են մեր քրորին վրայ, Հայոց թագաւորին վրէժը լուծելու համար:

ՎՈՆՈՆ. — Հայ մը փրկեց Արքայից արքային կեանքը. մինչ Արքայից արքան այդ հայուն սիրելի թագաւորը մշտնջենաւոր բերդարդելութեան դատապարտած է: Կեանքի երկու հակապատկերներ: (Բեմին հետեւէն կը լսուին ոտնաձայներ որ կամաց կամաց կը մօտենան):

ԱՐՏԱԽԱՆ. — Վոնոն, միտքդ պահէ. այս աշխարհի մէջ բարեբարութիւնն ու երախտագիտութիւնը միշտ իրարու կը-

նակ դարձուցած պիտի ըլլան: Բայց դուն հիմա պատրաստէ սեղանը: Ժամը հասած է: (Վոնոն ներս կ'երթայ, սեղանը ներս կը բերէ եւ երկու իշխանական արձուներ կը գետեղէ դէմ առ դէմ):

ԱՐՏԱԽԱՆ. — (Բեմին վրայ պտտելով) Արչակ՝ քաջութեան եւ յանդգնութեան պատկեր է: Դրաստամատ՝ պաշտող իր հայրենիքին եւ թագաւորին: (Յետոյ դառնալով դէպի Վոնոն) Վոնոն, դուն ներս քաջութեան դրոշմէ քրդիչներով: (Վոնոն գլուխ տալով կը մեկնի եւ ահա կը լսուի Գողթան երգիչներու քմբուկի եւ բամբիռի ձայներ, որոնք կ'աւետեն Արչակի եւ Դրաստամատի քեւ քեւի մուտքը դէպի դահլիճ, աջակողմեան դռնէն: Արչակ հագած է իր քաղաքական պատմութեան, գոր Դրաստամատ հետը բերած է Շապուհի հրամանով, մագերն ու մօրուքը յարդարուած ու օծուած են):

ՏԵՍԻՆ Թ.

ԱՐՇԱԿ. — (Երիտասարդացած եւ զբաւառացած) Կարծես թէ նոր կեանք առի, աչքերս պայծառացան:

ԴՐԱՍՏԱՄԱՏ. — Տէր արքայ, քու անսպասելի կորույզ հայ ժողովուրդին հրապարտանքն է: (Կը նստին ընթրիքի սեղանին շուրջ):

ԱՐՇԱԿ. — Դրաստամատ, դեռ չըսիր թէ ի՞նչպէս ձեռք բերիր այս ուրախարար օրը: (Արտաւան իր իշխանական տարագով կը բերէ կերակուրի սկուտեղը եւ կը լեցնէ Արչակի եւ Դրաստամատի պնակներուն մէջ. ինչպէս նաեւ Գողթան գինին անոնց արծաթէ բաժակներուն մէջ):

ԴՐԱՍՏԱՄԱՏ. — Ես կը կոռէի այն պատմական ճակատամարտին մէջ՝ ուր Բագոս Մամիկոնեան դիւցազնաբար ինկաւ ասեղ փիղին տակ: Յանկարծ ես եւ իմ գունդս չըջապատուեցանք անհամար փիղերէ, որոնք մենք գերի բռնուեցանք եւ ուղղուեցանք դէպի Պարսկաստան:

ԱՐՇԱԿ. — Արչակ, չարժէ՛, թօթուէ՛ բունդ. արիւնին հոտը քեզ իրեն կը քաշէ:

ԴՐԱՍՏԱՄԱՏ. — Հանդարտէ, տէր իմ,

ուրախ լուրերու վրայ պիտի խօսինք: Խը-մենք Գողթան գինին՝ քաջարի Բագոսի անմահ յիշատակին: (Կը խմեն):

ԱՐՇԱԿ. — Կենդանարար Գողթան գինի, իմ ճաշերուս անբաժան ընկեր:

ԴՐԱՍՏԱՄԱՏ. — Քուչանաց Արչակունի թագաւորը նախ դեսպան մը զրկել էր Շապուհի արքունիքը, պահանջելով Հայոց Արչակունի թագաւորին ազատութիւնը: Երբ իմացաւ թէ Արքայից արքան խուլ վը մնայ իր ըրած սպառնալիքներուն, պատերազմ հրատարակեց Տիգրոսի դէմ: Արտաւան, լեցնէ բաժակները: (Կը լեցնէ):

ԱՐՇԱԿ. — Քուչանները միշտ եղած են եւ միշտ պիտի ըլլան Սասանեան թագաւորներու չարագուշակները: (Դրաստամատ գինի կը լեցնէ Արչակի բաժակին մէջ):

ԴՐԱՍՏԱՄԱՏ. — Շապուհ հաւատք չունենալով իր անհամար բանակներուն վըրայ, դրօշի տակ կանչեց իմ ձիաւոր վաշտս, որոնց հրամանատար կարգեց զիս, քու հաւատարիմ ներքինիդ: Պատերազմը սաստկանալուն, անվահեր քուչանները ասհուր ջարդ մը տուին պարսիկներուն, որոնց դիակները ծածկեցին պատերազմի դաշտը:

ԱՐՇԱԿ. — (Պարպելով բաժակը, գոր Արտաւան կը լեցնէ ոտքի կանգնած) Ա՛խ, ո՞ւր էր թէ ես եւ իմ անհման Վասակ քուչաններուն կողքին կանգնած ըլլայինք:

ԴՐԱՍՏԱՄԱՏ. — (Բաժակը պարպելով) Սարսափելի տեսարան մը պարզուեցաւ, երբ քուչանները բազմաթիւ պարսիկ զինուորներ ձերբակալեցին, շատերը փախուստի մատնեցին եւ եկան ամպի պէս պաշարեցին Արքայից արքան, որ մանուկի պէս լըցաւ: Հայկական նժոյգովս սլացայ կը դողար: Հայկական նժոյգովս սլացայ եւ դործեցի նախճիրներ, աղատելով Արքայից արքայի կեանքը մահուան ստոյգ վտանգէն. բազմաթիւ քուչաններ տապալեցի եւ շատ մը ախոյեաններու զլուխները կտրելով բերի Շապուհին առջեւ: (Կը պարպեն բաժակները):

ԱՐՇԱԿ. — (Զայրացած) Եւ դու, Դրաստամատ, կեանք տուիր թագաւորի մը,

որ քու բնիկ թագաւորիդ կեանքը թունաւորեց:

ԴՐԱՍՏԱՄԱՏ. — Տէր արքայ, ուղեցի անխիղճ եւ անհոգի պարսիկին ցոյց տալ հայ բազուկին ոյժը, եւ այդ ոյժով չիթ մը ուրախութիւն կաթեցնել իմ արքային դառն կեանքին մէջ:

ԱՐՇԱԿ. — (Կը պարպէ բաժակը) Առեղծուածը լուծուած է: (Արտաւան կը բերէ համեղ խորտիկներ եւ սրուակ մը Գողթան գինի, գոր կը լեցնէ Արչակի բաժակին մէջ):

ԴՐԱՍՏԱՄԱՏ. — (Կը պարպէ բաժակը) Իմ արտակարգ քաջութիւններս զիս աստուածացուցին Շապուհի աչքին, կանչեց իր առջեւ, գրկաբաց ընդունեցաւ զիս եւ ըսաւ. — Դրաստամատ, կեանքիս փրկիչը, խնդրէ ինձմէ ինչ որ կ'ուզես, եւ ես քեզի պիտի տամ:

ԱՐՇԱԿ. — (Ակնարկ մը տալով Դրաստամատին եւ բաժակը պարպելով) Թող իր կեանքը խնդրէիր:

ԴՐԱՍՏԱՄԱՏ. — Արքայից արքայ, չարունակեցի, ես քեզմէ մէկ բան մը միայն պիտի խնդրեմ. հրաման տուր ինձի որ օր մը միայն երթամ տեսնեմ իմ բնիկ տէրը՝ Արչակ արքան, արձակեմ զայն իր կապանքներէն, լուամ անոր զլուխը, օժեմ, հաղուեցնեմ արքունի պատմութեանը, ուրախացնեմ զայն թագաւորական խորտիկներով եւ զուարթացնեմ Գողթան երգիչներով:

ԱՐՇԱԿ. — (Խմելով գինին) Ի՞նչ գոյն առաւ ոճիրներու արեան մէջ սնած սասանեանը:

ԴՐԱՍՏԱՄԱՏ. — Երեսին գոյնը փոխուեցաւ. — Խնդրանքդ շատ ծանր է, ըսաւ ինձի. — Սկիզբէն ի վեր որ պարսիկ պետութիւնը հաստատուած է եւ այն բերդը Անյուշ կոչուած է, եղած չէ մարդ արարած մը որ համարձակած ըլլայ Արքայից արքային առջեւ յիշել այդ բերդին անունը եւ անոր մէջ փախուած մարդը: Հայոց թագաւորը իմ ընկերս էր եւ ես կապել տըւած էի զայն ու նետած այդ բերդին մէջ, որովհետեւ նա իմ հակառակորդս էր եւ

զիս չարաչար յողնեցուցած: Եւ հիմա դու քու անձը մահուան դատապարտել տուիր, ինչեւով Անյուշ բերդին անունը: —

ԱՐՇԱԿ. — (Ումպ ումպ խմելով) Ստոյգ է. Արեաց թաղաւորութեան օրէնքը խիստ է. ով որ յանդգնի Արքայից արքային յիշեցնել այդ բերդին անունը, անմիջապէս կը դիտատուի:

ԴՐԱՍՏԱՄԱՍ. — (Խմելով) Արքայից արքան ոչ միայն զիս դիտատել չտուաւ, այլ իր հիացումը յայտնեց: — Դրաստամատ, ըսաւ, դու պէտք է իր քու անձիդ օգուտը մտածել, ինծմէ խնդրելով կամ աշխարհներ, կամ դաւառներ եւ կամ դանձեր: Բայց դու ամէն ինչ զոհեցիր քու բնիկ թաղաւորիդ համար: Եւ որովհետեւ քու արդիւնքդ շատ մեծ է, ուղածդ քեզի շնորհուած ըլլայ: —

ԱՐՇԱԿ. — (Ումպ ումպ խմելով) Ի՞նչ պէս մտար այս ահաւոր բերդին մէջ, առանց կռուի բռնուելու բերդապահներուն եւ լրտեսներուն հետ: (Արտաւան դուրսէն ներս կը մտնէ եւ կը կանգնի դրան մօտ):

ԴՐԱՍՏԱՄԱՍ. — Արքայից արքան ձեռքս տուաւ քու ազատութեանդ արքունի հրովարտակը, կնքուած իր մատանիով. հետս ալ դրաւ հաւատարիմ թիկնապահ մը որ զիս եւ Գողթան երգիչներու խումբը ապահով կերպով հոս հասցուց: Արտաւան պահաւը, Անյուշ բերդի իշխանը, արքունի հրովարտակը կարգաւորեն պէս՝ համբուրեց զայն, եւ այդ վայրկեանէն սկսած՝ ես դարձայ այս բերդին տէր եւ տնօրէն: (Արտաւան պահաւը գլխու հաւանութեան նշաններ ցոյց կու տայ):

ԱՐՇԱԿ. — (Բաժակը պարպելով) Հաւատարիմ Դրաստամատ, զուգակշիռ իմ դիւցազն սպարապետին, եթէ Հայաստանի մատնիչ ու դաւաճան բղէխները եւ առնոց գործակից իշխանները քու տիրասիրութեան նշոյլն ունենային, ես հիմա այս բերդին մէջ չէի ըլլար: Իցի՛ւ թէ կարենայի դառնալ իմ հայրենի աթոռս: Առաջին գործս կ'ըլլար իրադրո՞ծել Արշակաւանի խորտակուած ձրապս: Ապա պիտի ձերբակալէի իմ ապստամբ իշխաններս եւ

զանոնք կախել պիտի տայի Հայաստանի զլխաւոր հրապարակներու վրայ, 88 կախաղանի չուանները քաշել տալով արքունի պալատիս առջեւ պուշտոյց ցուցարարներուն: (Ներս կը մտնէ վոնոն եւ արձանի պէս կանգ կ'առնէ աջակողմեան դրան առջեւ):

ՏԵՍԻԼ Ժ.

ՎՈՆՈՆ. — (Երկչուտ ձայնով) Իշխան Դրաստամատ, ձեր առաջնորդ արքունի թիկնապահը հրամանի կը սպասէ Տիգրոն մեկնելու կամ բերդին մէջ մնալու համար:

ԴՐԱՍՏԱՄԱՍ. — Թող մեկնի. վերադարձիս դիրենք առատօրէն պիտի վարձատրեմ:

ՎՈՆՈՆ. — Ձեր հրամանը կատարուած է, իշխան: (Կը մեկնի գլուխը խոնարհեցնելով: Արդէն Գողթան երգիչները իրենց տեղերը բռնած են բեմին ետեւը: Արտաւան նոր խորտիկներ կը բերէ. Գողթան զինին միշտ անպակաս է. Արշակ եւ Դրաստամատ կ'ուտեն եւ կը խօսակցին):

ՏԵՍԻԼ ԺԱ.

ԱՐՇԱԿ. — (Անձկանօք) Դրաստամատ, մարմնական տառապանքներէ աւելի հոգեկան վիշտն է որ սիրտս վը վրձէ: Ի՞նչ եղաւ Փառանձեմը:

ԴՐԱՍՏԱՄԱՍ. — Տիգրոն մեկնելէդ վերջ, Փառանձեմ հաւատարիմ նախարարներու հետ ապաստանեցաւ Արտաւերս բերդը, ուր քաջամարդիկ զուգեւորու վըլուխ անցած, այնպիսի դիւցազնական քաջութիւններ գործեց, որոնց վրայ Արեաց աշխարհը հիացաւ: Գիշեր մը իր զուգեւորով բերդէն դուրս ելաւ եւ յանկարծական յարձակումով ջարդեց պարսիկ ընտիր զուգերը:

ԱՐՇԱԿ. — (Աշխուժով) Խմենք անպարտելի Փառանձեմի կենացը: (Կը պարպեն բաժակները): Ես վստահ էի որ Սիւնեաց լեռներու աղջիկը՝ առնական քաջութիւնը մարմնացուցած է: Կեցցէ՛ Փառանձեմ, Հայոց քաջարի թաղուհին: (Կրկին կը խըմեն): Գողթան զուարթ զուսաններ (ձայնը

բարձրացնելով), Երեցեք Սաթենիկի առեւանդումը: Արտաշէս արքան արիւնս պիտի բորբոքէ:

(Գողթան գուսանները գարծիքներու ընկերակցութեամբ կ'երգեն հետեւեալը):

Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեւան
զեղեցիկ,

Եւ հանեալ զոսկէօղ պարանն
Եւ անցեալ որպէս զարծուի սրաթեւ ընդ
զեռն

Եւ ձգեալ զոսկէօղ շիկափով պարանն,
Ընկեց ի մէջ օրիորդին Ալանաց,
Եւ շատ ցաւեցոյց զմէջ փափով օրիորդին

Արազ հասուցանելով ի բանակն իւր:

ԱՐՏԱԽԱՆ. — (Զուարթադէմ եւ մեկուսի) Ինչպիսի՞ սրտատուցող դրուագ:

ԱՐՇԱԿ. — (Տխրամած) Ալանաց զեղեցիկ եւ աշաղեղ օրիորդին առեւանդումը Արտաշէս թագաւորէն, համակ երգ է եւ բանաստեղծութիւն: Փառանձեմին առեւանդումը՝ անքաւելի ոճի մը ծնունդն է: Սաթենիկի եւ Արտաշէսի հարսանիքի հանդէսով՝ Հայոց արքունիքին մէջ ոսկի եւ մարդարիտ կը տեղար. իմ արքունիքիս մէջ՝ առեւանդուած Փառանձեմի աչքին ցոյց տուի միայն իմ հրամանովս ապանշուած անմեղ մարդոց ուրուականները: (Կ'անցնի խելագարութեան մոպայէ մը. աչքերը ոլորուն կը սեւեռին պատին վրայ. ոտքի կ'ելլէ՝ կը դիմէ դէպի այն կողմը): Դրաստամատ, ազատէ զիս իր ուրուականէն:

ԴՐԱՍՏԱՄԱՍ. — (Յուզուած եւ մեկուսի) Գնէ՛լի ուրուականն է... Թշուառ թագաւոր... (Կը նստեցնէ քաղաւորը, եւ պառնաբաժան) Տէր արքայ, վայրկեանական ցնորք մըն է, զինիին աղեցութեան տակ:

ԱՐՇԱԿ. — (Կը սկսի ախորժով ուտել) Ի՞նչպէս համեղ են այս խորտիկները. կարծես թէ արքունիքիս մէջն եմ եւ կ'ուտեմ հայ նաժիշտներու ձեռքով պատրաստուած կերակուրներ:

ԴՐԱՍՏԱՄԱՍ. — Տէր արքայ, Գողթան երգիչներուն հետ բերեր եմ նաեւ հայ իշխանուհի մը, որպէսզի իր ձեռքով պատրաստէ հայկական խորտիկները իր քաջարի թաղաւորին համար: Ուղեցի որ ամէն բան հայկական ըլլայ, որպէսզի սիրտդ աւելի զուարթանայ:

ԱՐՇԱԿ. — Հայ աղգի պաշտպանութեան անվանելի վահանը հայ կիներն է. խմենք անոր կենդանութեան: (Բաժակները կը պարպեն): Դրաստամատ, ո՞ւր է Պապ թագաժառանգը:

ԴՐԱՍՏԱՄԱՍ. — (Ոգի առած) Գահաժառանգ իշխանը, որ ատեն մը ապաւինած էր Վաղէս կայսեր արքունիքը, արքայական պատիւներով վերադարձաւ Հայաստան, թաղաւոր պսակուած:

ԱՐՇԱԿ. — (Խանդավառուած) Հոռո՛հական արծիւները՝ Եփրատի եւ Տիգրիսի ափերուն սիրական հիւրերն են:

ԴՐԱՍՏԱՄԱՍ. — Վաղէս տեսնելով որ Շապուհ արքան հաստատապէս վճռած է Հայաստանի անկախութիւնը ջնջել եւ հայ Արշալուսեաց զահը տապալել, ամէն նրկատու եւ վարանում մէկդի թողնով՝ Հայաստան ուղարկեց կրթուած լեզէնականներ, որոնց հետ Մուշեղ Մամիկոնեան միացուց հայկական զուգերը, հզօր երիտասարդութիւն մը, կազմուած որդիներու սերունդէն, որոնք եկած էին Պապ թագաւորին հրամանով վրէժը լուծելու իրենց հայրերուն, որոնք մորթաղերը ձգան, եւ իրենց մայրերուն՝ որոնք բերդերէ կախուեցան:

ԱՐՇԱԿ. — Շապուհի կատաղութիւնը չափ ունեցած ըլլալու չէ:

ԴՐԱՍՏԱՄԱՍ. — Ժիշտ է, Տէր արքայ, Շապուհ զանգառեցաւ կայսեր, դաշինքին դէմ գործած ըլլալուն համար, եւ Երբ Վաղէս ուշադրութեան արժանի չըրաւ այդ զանգառները, Շապուհ վատղած՝ ժողովեց իր պետութեան եւ իր դաշնակիցներու զօրութիւնը, եւ բուռն կերպով դիմեց Հայոց եւ Հոռոմայեցոց դէմ, ճիշտ այն ատեն՝ երբ Մուշեղ իր վրէժխնդիր

ընել արեւուն եւ կրակին: Իսկ հաւատու-
րաց Վահան՝ հրաման կու տայ չարչարել
իր հարազատ քոյրը՝ Համազասպունին,
Ռշտունեաց Գարեգին նախարարի կինը,
եւ ի վերջոյ կախել՝ եթէ մոլերու կրօնքը
յանձն չառնէ:

ԱՐՇԱԿ. — Համազասպունի... Քրիստո-
սոնեայ հայ կիներու փառքն ու պարծան-
քը, արժանի՝ Բիւզանդիոնի կայսրունին
ըլլալու:

ԳՐԱՍՏԱՄԱՍ. — Համազասպունի՝ ինք-
զինքը միշտ քրիստոնեայ կը դաւանի: Այն
ատեն զինք կը հանեն բերդի այն աշտա-
րակին ծայրը, որ ուղղակի ծովուն կողմը
կը նայէր. կը մերկացնեն եւ գլխովայր
ոտքերէն կը կախեն: Մարմինը պայծառ
եւ սպիտակ՝ աշտարակի բարձրութենէն
ծիւնի պէս կը փայլի եղեր:

ԱՐՇԱԿ. — Վրէժ երկնքէն, վրէժ կրօն-
քէն զոր ուրացար: Վրէժ կը պոռան հայ-
րենի խոսքան դաշտերը: Անդու՞ քայքա-
յիչ հայրենի տանդ: (Ունայ ունայ կը խմէ):

ԳՐԱՍՏԱՄԱՍ. — Տէր արքայ, անոնց
վրէժի ժամը հասած է: Եղջերք լերան
բախտագուշակ քուրմերը տեսեր են Մե-
րութանի գլուխը տէգի մը ծայրը անցը-
լած: Մամիկոնեան Վահանը իր սեփական
տան մէջ ատուած է իրը չարագործ թըշ-
նամի մը:

ԱՐՇԱԿ. — Բայց փառամոլ ուղին ցմահ
անդեղջ է:

ԳՐԱՍՏԱՄԱՍ. — Վրէժի ծարաւը բոր-
բոքեր է Մուշեղի գունդին մէջ: Հայոց
տիրասէր նիզակաւորները՝ խրախուսուե-
լով քու յիշատակովդ եւ քեզ տակաւին ի-
րենց թագաւորը ճանչնալով, քաջութեամբ
ծիւնէն կը տապալեն իրենց պարսիկ ա-
խոյեանները, եւ Շապուհի առջեւ անգամ
կ'ազդադակեն. — Ա՛ռ Արշակ քաջ: — Իսկ
այն ախոյեանը զոր կը սպաննեն կամ կը
վիրաւորեն՝ իրենց բանտարկուած թագա-
ւորին կը նուիրեն, պոչելով. — Արշակին
զոհ եղիր: — Շապուհ ապշեր է այս կամ-
քերու հրաշալի միութեան եւ տիրասիրու-
թեան վրայ: Արքայից արքան իր մեծա-
մեծներուն առջեւ ըսեր է. Երանի՛ որ Հա-

յոց գունդին տէր է, այնպիսի տիրասէր,
միաբան եւ միամիտ զօրքերու:

ԱՐՇԱԿ. — (Զուարթացած) Խմենք
Գողթնի խաղողի փննաւուն հիւթէն, ա-
խորժահամ այս գինիէն, զուարճութիւն
սփռող ոսկեգոյն հեղուկէն. ինծի համար
միակ դեղը՝ սրտիս անչափ կակիծներու
դէմ: Քանի որ պատերազմի եւ փառքի
մէջ իմ քաջամարտիկ զինուորներս լուծե-
ր են իմ վրէժս, կրնամ հանդիստ մեռնիլ...
(Արշակ եւ Դրաստամատ կը պարպեն բա-
ժակները):

ԳՐԱՍՏԱՄԱՍ. — Տէր արքայ, մահը
պիտի չհամարձակի մօտենալ քեզի:

ԱՐՇԱԿ. — Դրաստամատ, ո՞ր է Փա-
ռանձեմը. կը հրամայեմ որ ճշմարտու-
թիւնը ինձմէ չծածկես:

ԳՐԱՍՏԱՄԱՍ. — Ըճմարտութիւնը դառ-
նութեամբ լեցուն է: Երբ Արտաղերս բեր-
դը սովի և ժանտախտի երեսէն անձնատուր
եղաւ, Շապուհ՝ Արտաղերսի զիւցաղնու-
հին եւ հաւատարիմ նախարարներու կի-
ները Ասորեստան տարաւ, եւ հոն զանոնք
անարգելէ վերջ՝ ցից հանել տուաւ պար-
սիկ բանակներու առջեւ (կ'արտասուէ):

ԱՐՇԱԿ. — Լկտի պարսիկ, ո՞րքան ա-
նարդ ես Մուշեղի ասպետական բարձրու-
թեան առջեւ: Վա՛հ քեզի, վայ Շապուհ,
ամէնէն աւելի զօրաւոր նկուքը կը նետեմ
վրադ: Երկինքը թող լսէ ինծի:

ԳՐԱՍՏԱՄԱՍ. — Արտաղերսի զիւցաղ-
նունին՝ նախատինքի սիւնի վրայ կը դառնէ
Արքայից արքան:

ԱՐՇԱԿ. — (Հառաչանք մը արձակելով)
Այսպէս անհետացար, Փառանձեմ. քու
զեղանի աչքերդ, որ աստղերու պէս կը
փայլէին, չթոնքներդ՝ որդան կարմիրի
նման վառ, չքնաղ հասակդ՝ որ Սիւնեաց
դաշտերու շուշաններուն վը նմանէր...
պիտի մնաս քաջութեան յաւերժական վը-
կայ մը:

ԳՐԱՍՏԱՄԱՍ. — Եւ զմրուխտէ վարդ
մը:

ԱՐՇԱԿ. — Տուէք ինծի դարերէ ի վեր
աշխարհի ամէն կողմերէ եւ ամէն ժամա-
նակ փառարանուած եւ օրհնուած Գողթնի

գինիէն (Դրաստամատ կը լեցնէ Արշակի
եւ իր բաժակը): ... Զեմ գիտեր թէ ին-
չո՞ւ հայկական նաւասարդը մտքիս առջեւ
կը ներկայանայ այս պահուս իր բոլոր չը-
քեղութեամբ: Գողթնի զուարթ երգիչներ,
հնչեցուցէ՛ք ինծի Նաւասարդի երգը:

ԳՈՂԹԱՆ ԵՐԳԻԶՆԵՐԸ (կ'երգեն փողով
եւ նուագարաններու ընկերակցութեամբ):

Ո՞ տայր ինձ ըզծուի ծխանի
Եւ զառաւօտն Նաւասարդի,
Զվաղելն եղանց եւ զվաղելն եղջերուաց:

ԱՐՇԱԿ. — Ահա չինարար թագաւոր մը՝
որ մեռած պահուն արձակեր է այս հառա-
չանքը, ուր կը տեսնենք թագաւոր մը եր-
ջանիկ, իր հովանիին ներքեւ աճող գիւ-
ղերու ծովում, իր ժողովուրդի հայրենա-
սիրական համախմբումներով եւ իր երկրի
աղնուսպետական հաճոյքներով:

ԳՐԱՍՏԱՄԱՍ. — Այսօր հայ դաւաճան-
ներու ձեռքով աւերակներու ծովին է որ
երկինք կը բարձրանայ:

ԱՐՇԱԿ. — (Ալլազումած) Ընդ միշտ մը-
նացէք բարեաւ, երկրաւոր դրախտի չորս
դետեր՝ Եփրատ, Տիգրիս, Արաքս եւ Ճո-
րիս: Մնաս բարով վեհափառ Մասիս, եր-
կրորդ օրօրան բոլոր մարդկութեան: Մը-
նացէք բարեաւ Հայաստանի ծաղկալից
դաշտեր, եղբրուած անթառամ ծաղիկնե-
րով: Մնացէք բարեաւ Հայաստանի անու-
շահամ եւ անմահարար ջուրեր: Ամէնէն
աւելի մնաս բարեաւ դու հայ ժողովուրդ,
որ հակառակ իմ դործած մեծամեծ ոճիր-
ներուն, կապուած մնացիր ինծի հետ,
ոսղմի դաշտը զրկելով քու քաջազուն դա-
ւակներդ, պաշտպանելու համար հայրե-
նիքի ազատութեան սրբազան աւանդը: (Կը
հառաչէ եւ կ'արտասուէ. ու կ'ըսէ մեղմա-
ձայն) Կեանքիս մէջ առաջին անգամն է որ
կու լամ:

ԳՐԱՍՏԱՄԱՍ. — (Ծայր աստիճան յուզ-
ուած) Շատ կը սիրեմ քեզ, արիասիրտ
արքայ, գիտե՞ս որչափ խոռված եւ յուզ-
ուած եմ:

ԱՐՇԱԿ. — Այո՛, դուն շատ կը սիրես

դիս, բայց պատիւս քեզմէ աւելի կը սիրէ
դիս:

ԳՐԱՍՏԱՄԱՍ. — Արտաւան, լեցուր բա-
ժակները: (Արտաւան որ ակնկառոյց կը
դիտէր այդ սրտամոլիկ տեսարանը, յայտ-
նապէս յուզուած է. կը լեցնէ բաժակները
եւ աջակողմեան դռնէն կը մեկնի):

ԱՐՇԱԿ. — (Քանի մը քայլ յառաջանա-
լով դէպի Գողթնի երգիչները) Գողթնի
զուարթ երգիչներ, ահա ձեզի իմ յետին
պատուէրներս: Իմ ոսկրներս մի՛ թողուք
օտար հողի վրայ, օր մը զանոնք հանդ-
չեցուցէք իմ հայրենի հողիս վրայ, իմ
նախնեաց գերեզմանին մէջ, ծածկուած
Արաղածի անուշահոտ ծաղիկներով: Եւ ի
յիշատակ Վասակի, անոր ալապատդէ
արձանը կանգնեցէք Տարօնի Ողական ամ-
րոցի հրապարակին վրայ, դէմքը դէպի
Մասիս լեռը դարձուցած:

ԶԱՅՆԵՐ ԲԵՄԻ ԵՏԵԻՆ. — Մեր սիրելի
արքային պատուէրները մեզի համար նը-
ւերական կտակներ են:

ԱՐՇԱԿ. — Օ՛հ, նորէն երգեցէք Նաւա-
սարդի առաւօտեան երգը: Նաւասարդի ա-
ռաւօտը ինծի համար լեցուն է ուրախ եւ
տխուր յիշատակներով: Նաւասարդի դե-
ղեցիկ առաւօտ մըն էր երբ... Թափել տը-
ւի Գնէլի արդար արիւնը...: (Մինչ Գող-
թան երգիչները կը կրկնեն այդ երգը, Ար-
շակ եւ Դրաստամատ նստած կ'ուտեն հայ-
կական վարունգ եւ խնձոր):

ԱՐՇԱԿ. — Տուէք ինծի անգամ մըն ալ
այդ հրաշէկ գինիէն, իմ հայրենիքիս Գող-
թան գինեւէտ դաւառի գինիէն, որ նոր
զօրութիւն մը կու տայ: (Արտաւան կը լե-
ցնէ Արշակի եւ Դրաստամատի բաժակ-
ները: Արշակ՝ գինիի բաժակը ձեռքերուն
մէջ կ'ըսէ). Դու զիւցաղներու լանջքերը
կը պողպատես, զուսանները աշխուժով կը
վառես եւ կուրծքերը կը բոցակերպես:
(Բաժակները կը պարպեն մինչեւ ցմրուր):

ԳՐԱՍՏԱՄԱՍ. — Երբ բաժակները կը
լեցունին, սրտերը կը մոռնան ամէնէն ա-
ւելի դառն ցաւերն ալ: (Հագիւ այս խօս-
քերը արտասանած՝ Արշակ կը վերցնէ դա-
նակը որով կը կտրէր խնձորը, երեք ան-

գամ գույքը կը ծեծէ, գոչելով)։

ԱՐՇԱԿ. — Արշակ, Արշակ, Արշակ... մինչեւ հո՞ս պիտի հասնէիր... (Կը հառաչէ եւ դանակը իր սիրտը կը մխէ ու կը տապալի աղմուկով։ Բեմին ետեւէն իրարանցում կը լսուի, Գողթան երգիչները ներս կը վազեն նուագարանները ձեռքերնին, ինչպէս նաեւ Արտաւան եւ Վոնոն՝ սարսափահար)։

ՏԵՍԻԼ ԺԲ.

ԴՐԱՍՏԱՄԱՏ. — (Կը վազէ Արշակի արիւնոտ եւ անշնչացած մարմնին վրայ) Օգնութիւն, փութացէ՛ք։

ԵՐԳԻԶ ՄԸ. — Մարած է։

ՎՈՆՈՆ. — Մեռած։

ԱՐՏԱԽԱՆ. — (Մտաւեղ) Ի՞նչ պատահան պիտի տամ Արքայից արքային, երբ իմանայ իր թագակիր եղբոր անձնասպանութիւնը։

Բ. ԵՐԳԻԶ ՄԸ. — Արիւնը հեղեղօրէն կը վազէ։

Գ. ԵՐԳԻԶ. — Ո՛վ երկինք... չունէ կ'առնէ... պիտի ապրի։

ԱՐՏԱԽԱՆ. — Երգի՛չ, մխիթարութեան չիթ մը վաթեցուցիր սրտիս խորը։

Բ. ԵՐԳԻԶԸ. — Ձի չնչեր։

ԴՐԱՍՏԱՄԱՏ. — Մէկը՛ր քաշուեցէք։ (Բոլորն ալ մէկդի կը քաշուին։ Դրաստամատ Արշակի կուրծքէն կը յափշտակէ արիւնոտ դանակը եւ գալով սեղանին մօտ, իր տեղը, գինիով կը լեցնէ բաժակը եւ ձեռքերուն մէջ առնելով գայն, պահ մը կը կենայ)։

Գ. ԵՐԳԻԶԸ. — Մեռած է, մեռած։

ԴՐԱՍՏԱՄԱՏ. — Այսպիսի ողբերգութեամբ մը պիտի վերջանար թագաւորի մը կեանքը, որ բաժնուած է փայլուն յաղթանակներու եւ խորունկ թշուառու-

թեան մէջ։ (Կը պարպէ բաժակը մինչեւ ցմբուր, յետոյ քեզանիքին տակէն հանելով դանակը) Ա՛յ, մաղերս դիտու աղբայ կը ցցուին, Դրաստամատ, Դրաստամատ, Դրաստամատ... Ես եղայ, սիրելի արքայ, ես եղայ քու մահուանդ պատճառը։ Ո՛վ դանակ, դու վերջ տուր կուրծքիս մէջ կուտակուած վրէժին եւ զայրոյթին։ (Դանակը կը մխէ սրտին մէջ եւ անշնչացած կ'իյնայ Արշակի դիակին մօտ։ Ուժգին իրարանցում մը, մինչ Արտաւան եւ Վոնոն գարհուրած՝ դուրս կը փախչին, Գողթան երգիչները խելայեղօրէն կը խուժեն բեմին վրայ եւ ծունկի գալով Արշակի եւ Դրաստամատի դիակներուն առջեւ՝ խմբապետը կ'ըսէ յուզուած ձայնով)։

ԽՄԲԱՊԵՏ. — Աստուծո՛վ ջախջախուիս, Շապուհ, Արքայից արքայ։ Գարշելի ըլլաս յաւիտեան։ Կանչենք Մուսան եւ երդենք։

ԽՄԲԵՐԳ.

Ո՛վ իմ Հայաստան, երկիր դու քաջաց Ծընող, սնուցիչ մեր վեհ դիւցազանց, Թող միշտ յաւիտեան փայլին ջահ աստղեր Բաջին Արշակայ եւ Դրաստամատի։

Շիրիմներն անոնց թրջենք արցունքով եւ ծածկենք զանոնք խանդավառութեամբ։ Երգիչներ Գողթնի դաշոյնն այդ բոսոր Մեղ հրաւէր կարգայ արդար վրէժի։

Օ՛ն, դէպի կըռիւ սուրբ ազատութեան վեր կաց, Հայաստան, աշխարհ Արամեան, ճակատդ հրապարտ Մասիսի ուղղած, Որ թափէ շանթեր ի դուռն մատնչաց։

(Երգիչները քեւերնուն վրայ առած երկու դիակները՝ բեմէն դուրս կը հանեն)։

Վ ա ր ա գ ո յ ր

ՎԵՐՁ

ՄԵՐ ՆԱԽՆԵԱՅ ՀԱՒԱՏՔԸ

ՊԱՏԱՐԱԳ ՎԱՍՆ ՆՆՁԵՑԵԼՈՑ

Պոլսոյ Ամենապատիւ Պատրիարքը՝ Գարեգին Արքեպիսկ. Սալապուրեան վերջերս կարգ մը լուսարանութիւններ տուած է Ս. Պատարագի զոհին եւ Հոգեհանգրստեան պաշտօնի մասին¹։ Լուսարանութիւններ, որոնք դժբախտաբար կը հեռանան Հայաստանեայց Եկեղեցւոյ դարաւոր աւանդութենէն, եւ հետեւաբար՝ անընդունելի են, մեր համեստ դատաստանով։

Թողովով այդ կարծեցեալ լուսարանութիւններուն առաջին մասը, ուր Ս. Հաղորդութեան եւ պատարագի խորհուրդի մասին անճիշտ եւ թերի բացատրութիւններ կը տրուին — որոնք աւելի բողոքական մեկնաբանութիւններ են եւ խորթ՝ հայ բնիկ աստուածաբանութեան — ներկայ յօդուածով կ'ուզենք ծանրանալ երկրորդ մասին վրայ, ուր նմանապէս կարգ մը թիւր հաւաստումներ կու գան խոցել հաւատացեալ ականջներ։

Խօսելով Ս. Պատարագի արդիւններուն եւ զերբնական զօրութեան վրայ՝ Սրբ. Պատրիարք Հայրը կ'ըսէ. « Եւ այս պատարագը կը մատուցուի կենդանեաց (ողջերուն) համար, անոնց մեղքերուն քաւութեան եւ թողութեան համար՝ զղջումով եւ ապաշխարութեամբ պայմանաւորուած. եւ ո՛չ մեռելոց, ննջեցեալներուն համար »²։

Ապա անցնելով հոգեհանգստի աղօթքներուն, դարձեալ նոյնը կը կրկնէ. « Հո-

գեհանգստեան պաշտօնները, որոնք ի յիշատակ ննջեցեալներուն կը կատարուին, բացարձակապէս անկախ են Ս. Պատարագէն, որ կը մատուցուի ի յիշատակ Յիսուսի ողջերուն կողմէ եւ ողջերուն համար »³։

Հուսկ եղրակացնելով եւ ամփոփելով իր խօսքերը, կը յարէ. « Ս. Պատարագը կը մատուցուի ողջերուն, անոնց մեղքերու քաւութեան եւ թողութեան համար։ Հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի ի յիշատակ ննջեցեալներուն՝ եկեղեցիին մէջ, անկախ Ս. Պատարագէն եւ Պատարագի խորհուրդակատարութեան աւարտումէն յետոյ »⁴։

Սրբ. Պատրիարքը կը կրկնէ եւ կ'երեւելն իր այս հաւաստումը նաեւ յետանցողակի նկատելու Ս. Պատարագի մատուցման ընթացքին կատարուած « կենդանեաց եւ մեռելոց » յիշատակութիւնը, որ՝ ըստ իրեն՝ լոկ ընդհանուր յիշատակութիւն մըն է⁵։

Դարձեալ Սրբ. Պատրիարքն է որ կը խօսի. « Ննջեցեալները անդամ ըլլալով յաղթական Եկեղեցիին, որպէս մարմնազերծ հոգիներ՝ ուղղակի հաղորդակից են Տիրոջ հոգիին. մինչ ողջերը, զինուորեալ եկեղեցիի անդամներ, հոգեպէս հաղորդակից են Քրիստոսի՝ Ս. Պատարագի խորհուրդին միջոցով »⁶։ Այս վերջին բացատրութեամբ, որքան կը հասկնանք, Սրբ. Պատրիարք Հայրը կը ջանայ մեկ-

1. Շողակաթ, Է. (1958, թ. 4-5) էջ 150-153 (Ս. Պատարագի խորհուրդը եւ հոգեհանգստեան պաշտօնը)։ Նոյն գրութիւնը տե՛ս նաեւ թաւադրումը)։ Նոյն գրութիւնը մէջ, 15 եւ 16 Մայիս 1958, մամակ օրաթերթին մէջ, 15 եւ 16 Մայիս 1958, էջ 1 եւ 3 (Ս. Պատրիարք Հօր լուսարանութիւնները)։

2. Շողակաթ, անդ, էջ 151-152 (ընդգծումները հեղինակինն են)։

3. Անդ, էջ 152։

4. Անդ, էջ 153։

5. Անդ, էջ 152։

6. Անդ, էջ 153։